նապարհի վերայ և միւսը Արարանում, պետական պողոտայից դէպի Զամբլու տանող ճանապարհին, որ Ալիշանը հեթանոսական յիշատակ է ընդունել իր տեղեկատուին հետեւելով:* Նման մեկուսի երեւոյթ էր գուցէ եւ Ղարաջալարի յուշարձանը (Պատկեր 31ա.–32), որի անմիջական շրջակայքում բազիլիկ եկեղեցու հետքեր չգտանք, թէպէտ կային ուրիշ հին աւերակներ, կարելի է եւ յուշարձանը բերուած լինի Արագածի Աւանից, որ միայն մօտաւորապէս երեք մղոն դէպի արեւելք է գտնւում եւ բազիլիկ եկեղեցի ունի մի նաւանի:

Աւանը եւ Ղարաջալար գտնւում են պատ-



Պատկ. 31ա.

մական Կոչ կամ Կուաչ աւանից դէպի հիւսիս՝ լեռնակողմը, Արագածի վերայ:

Նոյն լերան հարաւային լանջերին է Թալին մեծ աւանը, որ ամենաշատ թւով կոթողներ ունի պահած եւ որոնց մասին յիշեցինք արդէն: Ներքին Թալինում եւս կայ մի կոթող, ոչ բոլորովին պարզ, մի Փիգուր

*Այրարատ. 254: